ՊԱՐՍԿԱՀԱՅԵՐԻ ՆԵՐԳԱՂԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԸՍՏ ԺԱՄԱՆԱԿԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

Ստորև տպագրվող հինգ փաստաթղթերը, որոնցից երեքը հայ-ռուսական բարեկամության Չատագով Ներսես Աշտարակեցու՝ պարսկահայ համայնքներին ուղղված կոչերն են, բացահայտում են վերջինիս ջանադիր և հայրենանվեր գործունեության ուշագրավ կողմերից մեկը՝ պարսկահայերի ներգաղթը գլուխ բերելու ուղղությամբ նրա թափած ջանքերը։ Միաժամանակ փաստաթղթերից մի անգամ ևս երևում է 1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմում ռուսական զենքի տարած հաղթանակի վճռական դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրում, Հայաստանի արևելյան հատվածը հայահավաքման կենտրոն դարձնելու գործում։

Հրատարակվող փաստաթղթերը պահվում են Մաշտոցի անվան մատենադարանի արխիվի Պաշտոնական դիվան և Ներսես Աշտարակեցու ֆոնդերում։

ՄԱՐԿՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

№ 1

Ներսես Աշտարակեցու կոչը Ատրպատականի հայերին

1827 թ. դեկտեմբերի 28,
Երևանի բերդ

Առ ժողովուրդն Հայոց, որ ի սահմանս Ատրպատականի.

Պատուելի հասարակութեան հայոց հոգևորականաց և մարմնաւորականաց եղելոց ի Թէվրիզ, յՈւզումչի և յայլ գիւղօրայս նորին ի Խոյ, ի Սալմաստ. յՈՒռումիայ, ի Մարաղայ, ի Դուխուրղան, ի Ղարադաղ և յամենայն գիւղօրայս նոցին ընդ ամենայն սահմանս Ատրպատական աշխարհի[1] գերապատիւ առաջնորդաց՝ եպիսկոպոսաց և վարդապետաց, պատուարժան աւագ երիցանց, սրբագործ քահանայական դասուց և ամենայն կղերիկոսաց պաշտօնէից սրբութեանց մեծապատիւ մելիքաց, հասարակաօգուտ տանուտէրանց և քեդխուդայից, բարեպաշտ վաճառականաց և ճարտարագործ արուեստաւորաց, բազմաջան երկրագործաց, և առ հասարակ ամենայն Քրիստոսի աստուծոյ արեամբն գնեալ ժողովրդոց արանց և կանանց ողջոյն քրիստոսաւանդ բազում օրհնութեամբ մատուցանեմ աստուածային և սուրբ պարտաւորութեամբ՝ որպէս արքեպիսկոպոս՝ և՛ որպէս հովիւ, և՛ հայր հոգևոր։

Այլև աղօթս առնեմ, զի ամենաբաւական շնորհն աստուծոյ կարողացուսցէ զմիտս ձեր՝ հասանել, և ճանաչել զբանիցս իմոց զճշմարտութիւն, և բանալ զականջս ձեր ինձ, և լսել զոր գրեմս առ ձեզ յանուն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ յիշատակութեամբ պաշտելի բարբառոյ սուրբ աստուածութեան նորա, որ ունիցի ականջս լսելոյ, լուիցէ։

Աչք ձեր ամենեցուն տեսանեն, և ականջք ձեր լսեն միշտ՝ թէ ամենայն ազգն Հայոց ցիր և ցան ընդ ամենայն տեղիս՝ որպիսի վատաբախտութեան վիճակեալ կան ի քանի հարիւրաւոր ամաց հետէ, զրկեալ յամենայն բարե-

մասնութեանց աշխարհիս այսորիկ՝ ի հայրենի աշխարհաց, ի մեծութեանց, յիշխանութեանց, ի փառաց, ի պատուոց, ի հարստութեանց, ի հանգստութեանց, և յամենայն մարդկային վայելչութեանց, և, որ առաւելն է ի մէջ այս ամենայն նշանակեալ ողորմելի դրութեանց իւրեանց՝ զրկեալ նաև ի յուսոյ ապահով կենաց՝ միշտ ի մէջ կասկածանաց, և միշտ ի ներքոյ ահի երկիւղի վասն անակնկալ զրպարտութեանց և վասն զանազան վնասուց մարմնոյ և հոգւոյ։

Ազգին իսրայէլացւոց եօթանասուն տարի էին ժամանակք գերութեանց և խստագոյն պատժոց, և յԵգիպտոս չորեք հարիւր տարի միայն երկարեցան նոցա ժամանակք գերութեանց. յետ որոց ի լրանալ ժամանակին դարձուցանէր զնոսա աստուած ի հայրենիս իւրեանց հզօր ձեռամբ և բարձր բազկաւ։ Իսկ մեզ ազգի Հայոց՝ ահա այս քանի հարիւր ամք են, զի անդարձ գերութեամբ դտանիմք ի ներքոյ զանազան իշխանութեանց ընկճեալ և նուաճեալ անշուք, անզարդ, անպատիւ, անարգեալ, աղքատ և ամենայնիւ արհամարհեալ։ Եւ թէ մշակութիւն մեր չէր օգտակար մերոց իշխողաց, որպէս չէ եղեալ կամք նոցա վասն բարձրագլուխ շքեղ և փառաւոր, ուրախ և հանգիստ՝ հարուստ կենաց մերոց, այնպէս ևս չէր լինելոց կամք նոցա նաև վասն կենսապահ օրըստօրէական աղքատ կերակրոց մերոց։ Այլ՝ զի մշակութիւն մեր շահաբեր է վասն նոցա, շահ մշակութեանց մերոց միայն է պատճառ, որ թէպէտ և նուազեցուցեալ են զազգ մեր. մինչև յոյժ, այլ պահպանեալ են արհամարհանօք անձանց և հաւատոց՝ և չեն վերշացուցեալ տակաւին և բնաշինչ կորուսեալ մինչ իսպառ։

Այլ այսու ամենայնիւ ըստ ինքեան իսկ քաշայայտ է, զի թէ այնքան ճոխ թագաւորութիւն մեր, և իշխանութիւն և անհամար բազմութիւն անհետացեալ են բոլոր հարստութեամբ իւրեանց, փոքր միւս ևս՝ անհետանալ ունէաք ամենևին և մեք սինլքորքս նոցին, և որպէս կորուսեալ եմք զամենայն ազգական արժանաւորութիւնսն մեր, այնպէս կորուսանելոց էաք նաև զանուն ազգական և զհաւատն քրիստոնէական ի նախատինս մերոց անարժանութեանց աստուածային ամէնողորմած այցելութեանց մինչև ցվաղճան։

Բայց՝ ահա՛ զոհանամք զանսահման խնամակալութեանց աստուծոյ և տեառն մերոյ, զի ոչ իսպառ բարկացեալ մեզ, և ոչ յաւիտեան պահեալ ոխս՝ ըստ սաղմոսողին, յարոյց մեզ զեղջուր փրկութեան ի հասեալ ժամանակի այսմիկ զօծեալն իւր զտիեզերակալ ամենօգոստափառ մեծ կայսրն ամենայն Ռուսաց Նիկոլայ Առաջին, որ ի ծագաց հիւսիսոյ տարածեալ զթևս իւր, գտանի ահաւասիկ հովանաւոր հայրենեաց Հայաստան ազգի Արարատեան աշխարհի, և՛ փրկիչ, և՛ ազատիչ նոցա հզօր ձեռամբ և բարձր բազկաւ։

Իսկ ապա՝ որպէս ազգն Իսրայէլի ի ժամանակի այցելութեան իւրեանց զգային յանձինս իւրեանց զշնորհ ողորմութեանց աստուծոյ անպատում մարդասիրութեամբ հասեալ ի փրկութիւն իւրեանց, և ոչ անգիտացեալ վասն արժանաւորացն ինքեանց առ այն, սաղմոսէին միաբանութեամբ։ Ի դարձուցանել տեառն զգերութիւն Սիոնի և եղաք մեք մխիթարեալք։ Յայն ժամ լցան բերանք մեր խնդութեամբ և լեզուք մեր ցնծութեամբ։ Յայն ժամ ասասցեն ի հեթանոս՝ մեծ արար տէր զառնելն իւր ընդ նոցաս, մեծ արար զառնելն իւր ընդ մեզ, և մեք եղաք բերկրեալք։ Դարձո տէր զգերութիւնս մեր որպէս զուխս ի հարաւոյ, ոյք վարէին արտասուօք, հնձեսցեն ցնծութեամբ ևն (և այլն— Մ. Խ.)։ Այնպէս և այժմ կայ մնայ ձեզ ամենեցուն՝ զգալ յանձինս ձեր՝ զայս

անպատում շնորհ աստուածային մեծ ողորմութեանց՝ եկեալ հասեալ ի փրկութիւն ձեզ։ Քանզի այս է ահա՝ կանխագուշակ մարգարէութեանց սաղմոս երգուին՝ յայտնատեսիլ կատարումն առ ձեզ։ Այնմ զոր ըստ աստուածային նախասահմանութեան սքանչել արուեստ նկարագրէ։ Խրատեաց զնա և պահեաց որպէս զբիր ական, որպէս զարծուի ի թևս իւր ընկալաւ զնա և որպէս ի վերայ ձագուց իւրոց գթացաւ։ Տարածեաց զթևս իւր և ընկալաւ զնա, և բարձեալ բերէ ի վերայ միջնողաց իւրոց։ Էած, եհան զնոսաս ի զօրութիւնս երկրի ան։

Դուք իսկ զմտաւ ածէք, դիք ի կշիռ խորհրդոց ձերոց, և զարհուրեսցին իսկոյն անձինք ձեր՝ վասն խրատուց աստուծոյ առ ազգն Հայոց՝ այնքան հարիւրաւոր ամօք, այնքան սարսռելի դժուարակրութեամբ նոցին ի ներքոյ բարբարոսական բռնակալութեանց։ Զմտաւ ածէ՛ք, և դիք նոյնպէս ի կշիռ խորհրդոց, և սքանչասցին հոգիք ձեր վասն սքանչելի պահպանութեանց աստուծոյ ազգն մեր յամենայն անբերելի տառապանս նոցին՝ լուսաւոր և սուրբ հաւատովք քրիստոնէութեան անարատ մինչև ցայսօր որպէս զբիբ աչաց։ Զմտաւ ածէք և դիք ի կշիռ խորհրդոց, և տեսցին աչք հոգւոյ ձեր և մարմնոյ՝ զայս մեծ փրկութիւն աստուծոյ յաւիտենականի այժմ ի սմին ժամանակի եկեալ հասեալ ձեզ անպատում մարդասիրութեամբ, զի համաձայն գրելոցն՝ գթացեալ ի ձեզ որպէս ի վերայ ձագուց իւրոց, և հաճեցեալ ընկալնուլ զձեզ որպէս զարծուի ի թևս իւր. արդ ահաւասիկ հայեցարուք առաջ աչօք և տեսէք, զի արծուին երկագլուխ՝ դրօշակ քրիստոսապսակ ամենողորմած կայսեր Ռուսաց՝ տարածեալ զթևս իւր ըստ ամենայնս սահմանս Ատրպատական աշխարհի ի միջի ձերում, ոչ խնայէ ձեզ զաշխատութիւն իւր բառնալ զձեզ յանուն աստուծոյ ի վերայ միջնողաց իւրոց, և ածել, հանել զձեզ ի զօրութիւնս երկրի հայրենեաց ձերոց՝ ուր և կամք իցին ձեզ՝ յաշխարհ Արարատեան յԵրեւան, կամ Նախիջևան, և կամ ի Ղարապաղ, ըստ ընտրութեանց և հաճոյից իւրաքանչիւրոց։

Վասն փրկութեան ազգին Իսրայէլացւոց՝ զՄովսէս առաքեաց Աստուծոյ յԵգիպտոս գաւազանաւ հովուութեան, իսկ վասն փրկութեան տզգի Հայոց եղելոց ի Պարսկաստան՝ տեսանեմք արդ առաքեալ զքաջայաղթ զօրավար զօրաց Ռուսաց զնորին բարձր գերազանցութիւնն բազում նշանաց կրօղ զեներալ ադիւտանդ՝ զեներալ օտինֆանտերի Իւան Ֆեդրիչ Պասքևիչ[2] ահաւոր դրօշակաւ և հզօր զօրութեամբ իւրոյ կայսերական մեծութեան տիեզերասասան ինքնակալի ամենայն Ռուսաց։

Ապաքէն կայ և մնայ ձեզ ամենեցուն յայսմհետէ, ճանաչել զպարտաւորութիւն ձեր աստուծոյ ձերոց որպէս զբարի հաւատացեալ նորա, և ճանաչել զպարտաւորութիւն ձեր որդւոց և զաւակաց ձերոց յայսմհետէ մինչև յաւիտեան՝ որպէս զմարդ արժանացեալ աստուածային պարգևաց բանականութեան, և ոչ կորուսանել զժամանակ այսպիսի անպատմելի օրինակաւ այցելութեանց աստուծոյ ձեզ և մեծ ողորմութեանց։

Յայտնի են ձեզ ամենեցուն բաւականութեամբ չափ՝ անցեալքն ամենայն, որպէս ձերն, նոյնպէս և հարցն ձերոց և պապուց և ամենայն նախնեաց փառաւորութիւնքն և անարգութիւնքն, հարստութիւնքն և աղքատութիւնքն, լայնութիւնքն և նեղութիւնքն ամենայն ժամանակաց մինչև ցայսօր, և կարող էք իմաստուն խորհրդածութեամբ բարւոք մտածել և քննել արժանապէս, զի

թէ մինչև ցայժմ ո՛չ դուք, և ո՛չ նախնիք ձեր չէք ունեցեալ զմխիթարութիւն և զյոյս բարեաց, զինչ ևս այսուհետև կարող իցէք դուք ունել զյոյս։

Գիտեմ, զի սիրելի են ամենեցուն հող և ջուր ծննդական տեղւոյ, և ամենայն ստացուածք իւրաքանչիւրոց՝ տուն, այգի, ջրաղաց և այլ ինչ այնպիսիք, այլ զի ո՛չ դուք, և ո՛չ նախնիք ձեր զօգուտն այնոցիկ չէք վայելեալ հանդստութեամբ անձանց, որդիք ձեր ևս չունին վայելել բնաւ ո՛չ այժմ, և ո՛չ յաւիտեան, և փորձեալն կրկին փորձելն է աններելի յիմարութիւն ընդդեմ մարդկային բնաւորութեանց։

Տունք ձեր և այգիք և ջրաղացք ոչ արժեն զգինս անձանց ձերոց կամ կենաց ձերոց, և կամ հոգւոյ, և թէ ի պատճառս այնոցիկ կորուսանել ունիցիք զայս աստուածապարգև ժամանակ սքանչելի եղանակաւ ազատութեան ձերոյ և փրկութեան մարմնոյ և հոգւոյ ձեր և ամենայն ազգի ձերոյ, արկանէք ընդ դատապարտութեամբ աստուծոյ և ամենայն ազգատոհմի ձերոյ՝ զանձինս ձեր, և յիշատակ ձեր մնայ ձեզ արձան յաւիտենական նախատանաց։

Կինն Ղովտայ, զի ոչ փութացաւ ելանել ի լեառն ըստ բանի հրեշտակին, եղև արձան աղի, այլ ոչ կարաց ունել զհամ աղի։ Եւ եթե ազգն Իսրայէլացւոց չէին աճապարեալ անցանեալ ընդ Մովսէսի ընդ ծով Կարմիր, կամ մնային գերի հաւիտենական անդէն յԵգիպտոս, և կամ ընկղմէին ի դառնութեան ջուրց Կարմիր ծովուն ըստ օրինակի Եգիպտացւոցն, այլ զի փութացան և անցին ընդ Մովսէսի, ժառանգեցին զամենայն բարիսն աստուծոյ պատրաստեալ ինքեանց։ Զմտաւ ածէք ուրեմն և զգուշացարուք վասն ձեր և վասն սերնդոց ձերոց, զի ահաւասիկ բացեալ է ձեզ տէր աստուած ձեր զծովն Կարմիր և պատրաստեալ վասն ամենեցուն ձեր զճանապարհ ցամաք և՛ ընդարձակ, և՛ պարզևեալ է ձեզ առաջնորդ հզօր, որ կարող է աներկիւղ ի ծովէ և յամենայն բռնութեանց թշնամութեանց ձերոց առաջնորդել ձեզ և հանել զձեզ յերկիր ձերոց հայրենեաց ի ներքոյ քաղցր հովանաւորութեան օծելոյն աստուծոյ թագաւորի և կայսեր ամենայն Ռուսաց։

Յոյսն աստուածային ընդ ամենայն տեղիս միևնոյն է վասն ձեր, այլև վասն յուսոյ նորին կայսերական մեծութեան հաւատարմացուցանեմ զձեզ զամենեսին նորին, իսկ ամենապատիւ բանիւ՝ ըստ ամենողորմած հրամանագրոյն շնորհեցելոյ մեզ յամին անցելոյ; թէ ի լինիլն ձեր ի հաւատարմութեան իւրոյ կայսերական մեծութեան, ողորմութիւնք նորա լինելոց են միշտ ձեզ ամենեցուն աննուազելի առատութեամբ և հովանաւորութիւն նորա ունի ապահովացուցանել զձեզ ամենայնիւ, և վերածել զազգատոհմն մեր յիւրեանց արժանաւորութիւնն ազգական, ոյր վասն յատկապէս առաքեցի առ ձեզ զգերայարգ Ստեփանոս եպիսկոպոս Թիֆլիզեցի[3] և զնիկողայոս վարդապետ[4] նուիրակն ձեր նախածանօթ ձեզ, որպէսզի նոքա աւելի քան զոր գրեմքս մեք՝ քարոզելով ձեզ վասն ամենայն պարտուպատշաճ եղելոցն հոգևորականութեանց մերոց և ազգական հարազատութեանց, զարթուցեն զմիտս ձեր և զհոգի առ ընտրութիւն բարեաց և չարեաց ներկայականաց և ապագայականաց վասն ձեր և վասն սերնդոց ձերոց։ Եւ մեք եմք և մնամք աղօթարար վասն ձեր։

Արքեպիսկոպոս Հայոց Վրաստանու Ներսէս։

Մատենադարանի արխիվ, Ներսես Աշտարակեցու ֆոնդ, ց. 54, թղթ. 166, գ. ԻԹ, վ. 938, թ. 114—119։

№ 2

Ներսես Աշտարակեցու կոչը Ատրպատականի հայերին

1828 թ. փետրվարի 25.
Երևան

Ամենապատուելի հասարակութեան Հայոց բնակեցելոց յամենայն նահանգս Ատրպատական աշխարհի ի քաղաքս և ի գեօղս հոգևորականաց և մարմնաւորականաց՝ աւետարանական առաջնորդաց՝ եպիսկոպոսաց, վարդապետաց, աւագ երիցանց, քահանայից և ամենայն ուխտի մանկանց, նաև գերապատիւ խան և սուլթան անուանակրաց, արգոյ մէլիքաց, քեխայից, տանուտէրանց, վաճառականաց, երկրագործաց և յիւրաքանչիւր կացութեան եղելոց ողջոյն քրիստոսական նուիրեմ բազմապատիկ օրհնութեամբ։ Այլև աղօթս առնեմ, զի շնորհն աստուծոյ առատասցի ի վերա հոգւոց և մարմնոց ձերոց, կարողացուսցէ զմիտս ձեր և զխորհուրդս, և արժանի արասցէ զձեզ զամենեսին ընտրութեան մասին բարեաց մարմնոյ ձեր և հոգւոյ։

Անկելոյն Հայաստանի կալեալ զձեռանէ ի ձեռն ձեռին օծելոյ իւրոյ՝ կամի տէր յարուցանել զնա ի հասեալ ժամանակի յայսմիկ անճառ մարդասիրութեանց իւրոց՝ ո՛վ ամենապատուելի հայկազունք։ Եւ գիտէք դուք ամենեքին, թէ մեռեալ էր Ղազարոս չորեքօրեայ, այլ զի մարդասիրութիւն Քրիստոսի աստուծոյ իւրոյ տարաւ զնա ի գերեզման մեռելոյն, թէպէտև հոտեալ էր մեռեալն որպէս և ընթերցեալ լինի յԱւետարանն սուրբ, այլ՝ այնուամենայնիւ բացեալ զականջս իւր ձայնին Քրիստոսի, իսկոյն ընդ լսելս թէ՝ Ղազարէ՛, արի՛ ե՛կ արտաքս, վերապատուեալ զձայնն կենդանարար՝ ել մեռեալն ոտիւքն կապելովք և ձեռօքն երիզապնդօք։

Գիտէք և զայն, թէ հովիւ էր Մովսէս, և յորժամ գթացաւ աստուած ազգին Իսրայէլի՝ զնոսա առաքեաց յԵգիպտոս ազատել զնոսասի կաւաշաղախ գերութեան իւրեանց, այլ զի ծանր էր հովուի ազատութիւն բազմութեան ժողովրդոց ի հզօրեղ բռնակալութեանց ահեղ թագաւորութեանց գահի հարեալ Մովսէս հրաժարեցուցանէր զանձն իւր, այլ զի կամէր աստուած փրկել զժողովուրդ իւր, զօրացուցանէր զնա և ասէր. երբ դու և ես փրկեցից զժողովուրդ իմ հզօր ձեռամբ և բարձր բազկաւ։

Նոյն Քրիստոս է մեզ այժմ, ո՛վ լուսաւոր որդիք սրբոյ Լուսաւորչին Հայոց, որ նովին առատ մարդասիրութեամբ ելեալ է յայցելութիւն ձեզ, և նոյն կենսատու ձայն է, որ գոչէ առ ձեզ իմանալի բարբառով իւրով. արի՛ք կանգնեցարո՛ւք ի բազմաժամանակեայ անկմանէ ձերմէ, արձակեցարո՛ւք ի կապանաց ձերուց, լուծէ՛ք զշղթայս անարդ գերու, ելէ՛ք ի գերեզմանահանգոյն վայրաց, յորս տառապեալքդ էք ամօք հարիւրաւորք՝ զուրկ յամենայն վայելչութեանց աշխարհիս այսորիկ, և երթայք ի տուն ձերոց հայրենեաց ըստ օրինակին Ղազարու, որ յարուցեալ ի գերեզմանէ գնաց ի տուն հօր իւրոյ։

Եւ նոյն աստուած է, որ առաքեալ է առ ձեզ ոչ զհովիւն տկար Մովսէս, այլ զզօրեղ զինուորութիւնս օծելոյն իւրոյ մեծ տիեզերակալի ինքնակալի ամենայն Ռուսաց Նիկոլայ Պավլովիչի, որ տարածեալ է ահա առ ձեզ ընդ ամենայն սահմանս Ատրպատական աշխարհի։

Ապաքէն որպէս քարոզէր հովիւն Մովսէս ազգին Իսրայէլի։ Յուշ լիցին ձեզ աւուրքն առաջինք, իմացարո՛ւք զամս յազգաց մինչև յազգս։ Զնոյն և ես դարձուցանեմ այժմ առ ձեզ առ ամենապատուելի հասարակութիւն ազգի Հա-

լոց, որք բնակեալ էք ընդ ամենայն սահմանս Ատրպատական աշխարհի ի քաղաքս և ի դեղս նահանգաց իւրաքանչիւրոց։ Յուշ լիցին ձեզ աւուրքն առաջինք։ Յուշ լիցի ձեզ մարդասիրութիւնն Քրիստոսի և բանալն զկանչս իւր ձայնին Քրիստոսի՝ մեռելոյն Ղազարոսի։ Յուշ լիցին ձեզ գերիաք Իսրայէլացւոցն յԵգիպտոս, որք յառաջոյ իւրեանց ունելով զծովն Կարմիր՝ առանց երկբայութեանց ի վերայ աստուածային մեծ ողորմութեանցն ինքեանց՝ ամենաբարեպաշտ հաւատով և կատարեալ յուսով զհետ ընթացեալ առաջնորդութեանց աստուածառաք հովուին, անցին ընդ անդունդս խորութեան ջուրց ծովուն՝ յերկիր աւետեաց յԵրուսաղէմ քաղաք։ Յուշ լիցին ձեզ տէրութիւնք և՛ զօրութիւնք, և՛ ամենայն փառաւորութիւնք, և՛ իշխանութիւնք նախնեացն մերոց Հայոց։ Յուշ լիցին ձեզ հայրենիք Հայաստանի և ճոխութիւնք հարստութեանց և ամենայն վայելչութեանց Արամեանս տոհմի։ Յուշ լիցին ձեզ կորուստ ամենայնի այնոցիկ և զրկանք ժառանգաւորաց Հայաստան ազգի և աշխարհի։ Յուշ լիցին ձեզ հարքն ձեր և տառապանքն նոցա և վիշտ անհնարինք։ Յուշ լիցին ձեզ անարգութիւնք նոցին և ողբք և արտասուք վասն զանազան թշուառութեանց և ազգի ազգի դառնատանջ չարչարանաց, և անտանելի նեղութեանց, գերութեանց և ուրացութեանց։ Յուշ լիցին ձեզ աւուրքն Նոյի, յորս որք ոչ կամեցան մտանել ի տապանն՝ հեղեղաւ ջրոցն հետևեցելոց՝ հեղձամղձուկ եղեալ, ոչնչացան առ հասարակ։ Յուշ լիցին ձեզ փեսայք և բարեկամք Ղովտայ, որք ոչ լուեալ ձայնի հրեշտակացն կամ արդարոյն, որք հրաւիրէին փութալ ելանել ի լեռան փրկութեան, այրեցան ի Սոդոմ ի բոց հրոյն ծծմբոյ։ Յուշ լիցին ձեզ ամենեցուն բանք իմ այսոքիկ, զորս արժան է զմտաւ ածել այժմ ամենայն ազգի Հայոց, և դնել ի կշիռ ընտրութեանց հանճարւոր խորհրդոց, զի թէ մեռեալն իսկապէս՝ լուեալ ձայնն կենդանարար առանց օգնականի ինքնին իսկ ոտիւքն կապելովք և ձէռօքն երիզապնդօք յարուցեալ իսկոյն՝ ել ի գերեզմանէ, և կենդանեաց եղև ժառանգակից և ազգն Իսրայէլի ելեալ յԵգիպտոսէ՝ եղև ժառանգաւոր երկրին աւետեաց և սրբոյ քաղաքին Երուսաղէմի։ Այժմ, ուրեմն, եթե այս ահագին ձայն ազդեցութեան Քրիստոսի աստուծոյ մերոյ ոչ ունիցի ներգործել յականջս ձեր, և ոչ զարթուցէ զմիտս ձեր և զխորհուրդս առ ի քննել և զչափ առնուլ անհուն մարդասիրութեանցն աստուծոյ առ ձեզ, և այսպիսի հզօր ձեռնկալութիւն օծելոյ նորա ոչ զօրեսցէ կանգնել զձեզ, անկումն ձեր՝ եղիցի յետ այսորիկ անկանգնելի յաւիտեան, և վտանգն հանդերձեալ ձեզ՝ եղիցի առաւել, քան մնացելոցն արտաքոյ տապանին Նոյի և փեսայիցն և բարեկամացն Ղովտայ մնացելոցն ի Սոդոմ, և պարտաւորութիւնն ձեր այցելութեանց երկնից, և անփրկանաւոր գերութեանց որդւոց և զաւակաց ձերոց յազգս յազգաց՝ եղիցի ձեզ աններելի, և թմբրութիւն բանականութեանց ձերոց համարեսցի ձեզ առաւել, քան զճշմարիտ մեռելութիւնն Ղազարոսի։ Եւ ես, եթե զիս ոչ համարէի պարտական ձեզ՝ որպէս հովիւ և առաջնորդ ժողովրդեան իմում հայրենի ազգի, ոչ բնաւ յօժարէի գրել առ ձեզ զսոյն։ Այլ զի պարտական եմ առաջի աստուծոյ՝ վկայեմ ձեզ, զի որքան ժամանակ է խտրութիւն ազգական՝ կամ հաւատոց մահմէտականութեան և քրիստոնէութեան ի կամս և ի դատաստանի մտաց պարսից տէրութեան, անարժան է քրիստոնէից ունիլ զյոյս, և լինիլ ակնկալ թագաւորավայելուչ հասարակախնամ հովանաւորութեանց նորա, կամ պատկանաւոր հաւատարիմ հպատակութեանց մարդասիրական շնորհաց՝ մեծութեանց, իշխանութեանց, պատուոյ, փառաց, ճոխութեանց,

հարստութեանց, կատարեալ ապահովութեանց և այլ ամենայն մարդկութեան արժանաւոր բարեմասնութեանց, որում փորձառու էք առ հասարակ՝ ի յաւիտենից ժամանակաց։ Իսկ ապա հարազատ կարեկցութեամբ որպէս ծառայ Քրիստոսի և որպէս հովիւ ժողովրդեան նորա ըստ նախամարգարէին Մովսիսի՝ վկայեմ ձեզ, զի յատուկ մարդասիրութեամբ աստուծոյ առ ձեզ՝ հասեալ է ահա փրկութիւն նորա ի վերայ ձեր և առաջի կայ ձեր ոչ փախստեայ յառաջոյ փարաւոնի և զօրաց նորա ընդ ճանապարհ անակնկալ դիմել ի ծով Կարմիր, այլ անահ աներկիւղ ամենաապահով պաշտպանութեամբ յաղթող զօրաց Ռուսաց անցանել միայն ընդ Երասխ գետ, յետ որոյ ունիք վայելել զերկիր աւետեաց, զերկիր Երուսաղէմի, այս է երկիր խաղաղութեան, լի ամենայն մխիթարութեան և մեծ ապահովութեամբ ըստ մեծ ողորմութեանց և բարի գութ հովանաւորութեանց հասարակախնամ հայր, քան թագաւոր աստուածանման ամենօգոստափառ ինքնակալի և մեծ կայսեր ամենայն Ռուսաց, որոյ հարազատ հպատակաց երջանկական վիճակին՝ ունիք օրինակ ձեզ, աւանիկ ի ձերում միջի թող զբազմութիւնն զանազան ազգաց եւրոպացւոց, ըստ զանազան հաւատոց, նա իսկ՝ և զբազումս ի Հայոց գերաստիճան արժանաւորութեամբ մեծավայելուչ փառօք պատուեալ անզանազան ընդ իշխանս հզօրաց բուն ազգի կայսերութեան Ռուսաց, յորս քաջադէպ նպատակ ամենեցուն ձեր տեսանէք ակն յանդիման զնորին վեհազնութիւն աղայ Եղիազար Յովակիմեան Եղիազարեանց[5], որոց բազմահռչակ տունն մեծակառոյց՝ թողեալ յԱսպահան ի Նոր Ջուղայ՝ այժմ ևս գովաբանի ի լեզուս բազմաց։ Իսկ տունն նորակերտեալ անդ ի Ռուսաստան։

Փայլեալ առաւելապատիկ պայծառութեամբ, գտանի պարծանք հայրենեաց ճոխութեամբ, հարստութեամբ, հասարակաօգուտ բարերարութեամբ և ազգի ազգի առաքինագործ ազգասիրութեամբ։ Իսկ կապեալքն ի տունս և ցայդիս և ի քարինս ջրաղացաց իւրեանց անդէն յԱսպահան՝ տեսողացն է յայտնի, թէ ո՞րպէս առ հասարակ գտանին կապեալք և կաշկանդեալք ի մշտնջենաւոր յաղքատութեան իւրեանց և ի մեծ ողորմելութեան։

Ցանձն արարեալ յատկական շնորհաց և ակնարկութեանց աստուծոյ ամենաբաւականի զձեզ զամենեսին, եմ և մնամ միշտ բարեմաղթ վասն ձեր։

Արքեպիսկոպոս Հայոց Վրաստանու Ներսէս

Մատենադարանի արխիվ, Ներսես Աշտարակեցու ֆոնդ, ց. 54, թղթ. 166, գլ. ԼԲ, վ. 1071։

№ 3

Ներսես Աշտարակեցու կոչը Մակուի և շրջակա գյուղերի հայերին

1828 թ. ապրիլի 12, էչմիածին

Պատուելի հասարակութեան Հայոց բնակեցելոց ի բերդին Մակուայ և յայլ գիւղօրայս սրբակրօն քահանայից և մեծահաւատ ժողովրդականաց մելիքաց և քեթխուդայից և ամենայն մեծաց և փոքունց ողջոյն քրիստոսաւանդ բազում օրհնութեամբ։

Հաւատամք թէ ի գալստեանն Քրիստոսի մեռեալք յառնելոց են ի գերեզմանաց իւրեանց. ըստ որոյ արժան է զմտաւ ածել, սիրեցեալք, զի թէ մե-

ռեալք յանենն ի գերեզմանաց ի գալստեան տեառն ուրախացեալք ի վերայ մեծ ողորմութեանցն աստուծոյ, դուք՝ կենդանիքդ, երբ այժմ ականատես լինիք, թէ այսպիսի անճառելի ողորմութեամբն իւրով բացեալ է ձեզ աստուած այսպիսի դուռն ողորմութեան, որ առանց արգելանաց և առանց հակառակութեանց ձերոց թշնամեաց կարող էք դուք ազատել զձեզ և զորդիս և զամենայն զսերունդս ձեր ի հազարամեայ տառապանաց և յամենայն հոգևոր և մարմնաւոր վնասուց, եթե ո՞չ բազում ուրախութեամբ փութասջիք ելանել և դալ ժամանել ի սահման Ռուսաց ամենողորմած տէրութեան, այնուհետև ձեր մտաց թմրութիւնն համարի ձեզ առաւել քան զմեռելութիւնն թաղելոց ի գերեզմանի։ Եւ վասն այնորիկ մնալ ունիք դուք յաւիտենական պարտաւորութեամբ պարտաւոր միշտ առաջի աստուծոյ վասն ձեր և վասն սերնդոց ձերոց յազգաց մինչև յազգս։

Ապաքէն որպէս հայր ձեր հոգևոր և որպէս պարտական ձեզ առաջի աստուծոյ համաձայն մարգարէական բանին որպէս դրեալն է, թէ՝ որդի մարդոյ դէտ կացուցի զքեզ տանդ Իսրայէլի, եթէ դու զգուշացուսցես զժողովուրդն վասն չարեաց եկելոց ի վերայ նոցա, և նոքա ոչ կամեսցին լսել քեզ՝ նոքա յանօրէնութեան իւրեանց կորնչին և դու զանձն քո ապրեցուսցես։ Ահա ես վասն ազատելոյ ի պարտաւորութեանց զանձն իմ գրեմ ձեզ զսոյն գիր և հրաւիրեմ զձեզ զամենեսին մտածել զամենայն անցեալ վատաբախտութիւնսն ձեր և զգուշանալ վասն ապագային, բարուք գիտելով, թէ որ ինչ եղեալ է յառաջագոյն, նոյնն լինելոց է յետ այսորիկ։ Եւ ըստ այնմ ոչ կորուսանելով զշնորհ մեծ ողորմութեանցն աստուծոյ առ ձեզ քանի բաց են ձեզ ճանապարհք ձեր, և բռնութիւնք բռնակալացն ի վերայ ձեր տկարացեալք են առաջի ահաւոր զօրութեանց քրիստոսազօր կայսեր ամենայն Ռուսաց զամենայն օգուտն ձեր այդր և զտուն ձեր և զայլ ստացուածս անշարժականս առ ոչինչ համարեալ վասն ազատութեանց և վասն ամենայն բարութեանց մարմնոյ ձեր և հոգւոյ մի օր յառաջ ճանապարհորդեսջիք ի սահման Ռուսաց, և յետ այնորիկ կարող էք յամենայն ժամանակի հետզհետէ հանել և բերել առ ընտանիս ձեր զամենայն զծանրութիւնս տնականս։ Ապա, եթէ հարիւրաւոր ամօք փորձառութեանց ձերոց միւս անգամ ևս խաբեցեալք ի շողոքորթ բանից և ի զանազան սուտ խոստմանց ձերոց իշխողաց յօժարեսջիք մնալ այդր, գիտասջիք, զի վասն ամենայն հոգևոր և մարմնաւոր վնասուց ձերոց մնալոց էք անպատասխանի առաջի աստուծոյ և առաջի մարդկան։

Ո՛ղջ լերուք, և մեք եմք, և մնամք վասն բարեացակամ։

Արքեպիսկոպոս Հայոց Վրաստանու Ներսէս։

Մատենադարանի արխիվ, Ներսես Աշտարակեցու ֆոնդ, ց. 54, թղթ. 166, գլ. ԼԲ, վ. 1119։

№ 4

Գեներալ Լապտեի կոչը Ուրմիայի քրիստոնյա բնակիչներին

1828 թ. ապրիլ (՞),

Հասարակ ժողովրդոցն քրիստոնէից Որմիա՝ յայտարարութիւն ի դիմաց զեներալ Լափթիֆ[6] զօրապետին Ռուսաց, այսինքն.

Առհասարակ քրիստոնեայք նահանգին Որմի գիտասցեն՝ զի զօրքն Ռուսաց մնալոց են մինչև ամիս հինգ ի Խոյ նահանգի։ Եւ ի նահանգին Որմիս մնալոց են այս օրից մինչև մեկ ամիս, վասն այսորիկ իմացուցաք ձեզ՝ զի ով ոք կամիցի գնալ և բնակիլ յերկիրն Ռուսաց, փութասցի ի պատրաստութիւն գնալոյ աստէն վաղագոյն։

Ի տասն և հինգերորդ պայմանադրութեանցն հաստատելոցն ի մէջ հաշտութեան ի մէջ երկուց կայսերութեանց, այսինքն Ռուսաց և Պարսից ի Թուրքմենչայ ի 10 փետրվարի 1828։

Արժանաւոր կամեցաք հաստատելոյ զհաշտութիւնն ի մէջ երկուց տէրութեանց, և ներել իւրեանց հպատակեալ ծառայիցն զամենայն զվնասս, զորս գործեալ են ի ժամանակս պատերազմին, զոր այժմ հաստատեցաք յայսմ վայելուչ հաշտութեանս միջի։

Նորին վեհափառութիւնն՝ շահն պարսից ներեաց միանգամայն ամենայն մեծամեծացն նահանգին Ատրպեճանու (Ատրպատականի—Մ. Խ.) զամենայն զմեղս իւրեանց, առ ամենայն ոք բնակիչք երկրին յայնմիկ, որպէս ի ժամանակս պատերազմի հպատակութեամբ էին նոյնպէս և այժմ յամենայն դիմաց մի և նոյն ձև եղիցի, որքան որ զօրքն Ռուսաց կան յաշխարհս Ատրպեճանու ամենայն զգուշութեամբ։

Բաց յայսմանէ այսմ օրից մինչև ցտարի մի ժամանակ և միջոց հրամայեալ եղև ժողովրդոց հասարակաց, զի ունիցին զճանապարհ իւրեանց արձակ առաջի աչաց իւրեանց. գնալոյ հանգստութեամբ ամենայն ընտանեօք և ընչիւք իւրեանց յերկիրն Ռուսաց, և վասն ապարանց նոցա բաց ի անժարժ կայից, որք կամիցին ծախելոյ կամ ընդ իւրեանց տանելոյ, ամենևին ո՛չ կառավարութիւնս, և ո՛չ մի ոք յերևելի իշխանութեանց չկարողասցի արգելել նոցա կամ խառնիլ ի գործս նոցին, և մինչև ցկէս փող այս գնացողաց ո՛չ գիւմրուկ ո՛չ ախտարի և ո՛չ այլ խարջ չառնիցեն, նոցա ծախելոյ կամ տանելոյ բաներիցն, և վասն մուլքից նոցա հինգ տարի ժամանակ հրամայեցին, որ քիչ-քիչ համբերութեամբ վաճառեսցեն, և ոչ ոք արգելիչ լիցի։ Եւ այս մեկ տարի ժամանակումն, եթէ սոքա համարձակեսցին պակասութիւն ինչ ընդդէմ այսմ պայմանադրութեան առնել ըստ ժողովրդոց իսկոյն բռնել և սաստկապէս պատժել։

Մատենադարանի արխիվ, ֆ. կաթողիկոսական դիվան, ց. 7, թղթ. 59, վ. 563։

№ 5

Բարսեղ եպիսկոպոսի տեղեկագիրը պարսկահայերի արտագաղթի մասին

1828 թ. հունիս (՞),
Էջմիածին

Պատմութիւն գազէթահանգոյն համառօտակի.

Յաղագս հրաւիրելոյ զհամայն ազգն Հայոց զԱտրպատականայինս առ ի վերաբնակեցուցանել յայսկոյս մեծի գետոյն Երասխայ, յօրհնաբանեալ յերկիր կայսերական ի հայրէնի և ի սեպհական վիճակ Հայկազեանս տոհմի, ջանիւք և յորդորական քարոզատուութեամբ Բարտղի նուռատ եպիսկոպոսի[7] և առաջ-

նորդի, աթոռոյն և համայն վիճակացն սրբազան առաքելոյն Թադէոսի, որ յԱրտագ զաւառի։

Ընդ սմին, նաև պատմութիւն յաղագս արկանելոյ զտէրունեան սուրբ խաչն աստուածընկալ ի ջուր հանդիսահռչակ խորհրդով յեղր արքայանիստ Դաւրէժ քաղաքի ի դետն կարկաչահոս, որք ի փրկչական թուաբերութեան։

Ի 1827, յամսեանն դեկ[տեմբերի] 27 սկսեալ լինի։ Մինչ ես նուաստ Բարսեղ եպիսկոպոսս, սրբազան առաքելոյն Թադէոսի վանաց և վիճակաց նորին առաջնորդ, լինէի ի Խոյ քաղաքի ի վիճակս իմ ի 1827 թուականութեան և ի դեկտ[եմբեր] ամսոյ յայնժամ ընկալայ ի Ներսէս սրբազան արքեպիսկոպոսէ և ի ծայրագոյն հոգևորական կառավարչէ դասուցս հոգևորականաց նամակ իմն, յորում գրէր յԵրևանայ, իմոյ նուաստութեան, նաև այնու, հարցումն ցիս հարցանէր այսպէս, թէ հնարաւո՞ր իցէ արդեօք զամենայն Ատրպատականային Հայազնեայսն մեր անցուցանել յայնկուսէ յայսկոյս Երասխ գետոյն, ի ներքոյ հովանաւորութեանն ողորմածագունեղի կայսերն ամենայն Ռուսաց, և յատկացեալ թագաւորի Հայոց, զի սիրելի ազգն մեր հայոց, ազատս կացցէն ի հարիւրաւոր ամեայ պարսկային անընդմբերելի բռնութեանցն։

Ապա՝ յ7-ի նոյն յիշեալ ամսոյ, զկնի երկուց աւուրց, այլ իմն գիր ևս ժամանեաց առ մեզ ի գերապատիւ պօլկովնիկ աղայ Եղազարէն Լաղարովեանց Մօսկովեցւոյ, մինչ էրն սա ինքն ի գիւղաքաղաքն Տուխարզան[8], որ հեռի է ի Դաւրիժու 40 վերստ ճանապարհաւ։ Սոյն քարտէն ևս համաձայն գտանիւր սրբազան Ներսէս արքեպիսկոպոսի դրութեանն, զի գրէր յորդորմամբ սիրելի՛ բազմավհատ ազգն իմ Հայոց. բացցէն զհոգւոյ զաչս իւրեանց, և տեսցէն զՔրիստոսապսակեալ կայսրն ամենողորմած և եկեսցէն ընդ հովանեաւ խնամատարած թևոց նորա, և կեցցէն ի յանդորրու վիճակ ցյաւիտեան զերծեալք ի հեթանոսական հարստահարութեանց։

Ի վերայ այսր ամենայնի, մանաւանդ տեսեալ զչերմ փոյթ հայրենասիրութիւն ազգասէր հօր մերոյ սրբազան Ներսէս արքեպիսկոպոսի, յաւելայ ի ջերմեռանդութիւն հոգւոյ և շարժեալ ի նախանձ հայրենասիրութեան հոգւով չափ փոյթ եղի այնուհետև գտանել զհնար յառա[ջա]դիմութեան բարետնօրէն մտաց նոցին և բարի խորհրդոց։

Եւ ապա յօր իններորդի դեկտեմբերի, բազումս ստիպելով զխօյէցի Մարդար աղայն մահտեսի Եղիազարեան[9], առեալ զնա ընդ իմ, գիմեալ գնացաք ի Դավրէժ, և ի 12 նոյն ամսոյ մուտ գործեցաք ի նմին քաղաք և մինչ ոչ էր անդանօր գերաստիճան Պասկովիչ կուսակալին, ելաք այտի գնալ ի Տուխարզան գիւղաքաղաքն և ուր ժամանեալ մեր և անդ գտաք զյիշեալ կուսակալն, ընդ նմին անդ էր և տղայ Եղազարն, ընդ որս և մեծ շահզատայն մեծի քաղաքին Դաւրիժու, նայիպի սուլթանայն անդ ևս էր. այն, որ վարէր զիշխանութիւնն իւր ի Դաւրէժ քաղաք, Ապպազմիրզայ կոչեցեալ արքաորդին[10], և ուր անդ միաբանեալ ընդ միմեանս կամէին արկանել զհիմն խաղաղ հաշտութեան, և մնացեալ մեր յայն գիւղաքաղաք յութն օր յաւուր տօնի ծննդեան ըստ Ռուսաց, այս է 25 դեկտ[եմբերի] ի 1827 ամին յայժմ տեսաւորեցաք ընդ բարձր գերապատիւ Պասկովիչ կուսակալին. և ապա բացածանուցաք նմա զմիտս, և զառիթ առ նա դիմելոյն մերոյ, յայտնելով նմին նաև՝ զմիտս գրութեանցն սրբազան Ներսիսի արհեստն և աղայ Եղազարին, և ապա խօստացաք Նորին բարձր մեծութեանն այսպէս ասելով, թէ՝ ախորժիք և լինիք մեզ ձեռնտու. մեք կարող եմք սիրայորդոր քարոզութեամբ մերով զմիտս ազգին մերոյ Հայոց

դալ և չուել զամենեսին և վերաբնակիլ նոցա յայնկոյս Երասխայ գետոյն, յորհնեցեալ տէրութեան Ռուսիոյ մեծի։

Եւ Նորին բարձր մեծութեան հաւանեալ զայնպիսի բանախօսութիւնս իմ, և առ ի ճշմարտելոյ զնոյն խոստումն իմ. հրամայեաց ձեռս դնել ի քարտզի և գրել իբր զմուրհակ ճշմարիտ դաշնադրութեամբ որպէս օրէնն է զսերունդ իմ և զգործ իշխանութեան մերոյ ի նմին նշանակելով, ճշգրտապէս և անսուտ միանգամայն, սմին իրի և աղայ Մարգարին հրամայեաց. զկնի այսոցիկ ամենայնի, որպէս վայելն էր իւրն մեծանունութեան խիլայեաց զմեզ արժանաւոր խիլայիւ, զնուաստս և զՄարգար աղայն և ապա պատուիրեաց մեզ գնալ ի Դաւրէժ և անդ մնալ գալստեան իւրոյ բարձրութեան մինչև եկեալ ի Դաւրէժ. դրեսցէ գիր ի վերայ իւրաքանչիւր նաչալնիկաց ի ձեռնտուութիւն նոցին մեզ, և մեք այսպէս զամենայն կատարելազործեալ վերադարձաք այտի ի քաղաքն Դաւրէժ։

Ի 1828, ի 6-ն յունուարի, յաւուր տօնի ծննդեան տեառն մերոյ մինչ հանդերձէաք մեք մեզէն կատարել զխորհուրդ մկրտութեան տեառն և ես յայն օր պատարագամատոյց գոլով, ահա էրիստով զենարալն[11], որ նախ ինքն յաղթութեամբ մուտ դործեալ էր ի քաղաքն Դաւրէժ, պատգամ առ մեզ առաքեաց, թէ պատրաստ լինիջիք դուք ևս կատարել զխորհուրդ մկրտութեան տեառն. ըստ օրինի եկեղեցւոյն ձերոյ (ցէրիմոնիեայով ասէր) և մեք ունիմք մեզ զքահանայ մի, և վայելուչ հոգեզուարճ հանգիսաւորութեամբ ելցուք յեզր քաղաքին ի դալարուղ վայրի գետագնաց, յոր ի միասին արկցուք զսուրբ խաչն աստուածընկալ ի ջուր և մեք յայնմ աւուր մատուցեալ զսուրբ և զփրկաւէտ քրիստոսականն պատարագ, և յաւարտ պատարագին յայնժամ ահա առաքեալ էր ի վեր յիշեալ էրիստավ զենարալն ի դուռն սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյն Հայոց Դաւրիժու, զգունդս-գունդս զինուորական սոլտատաց և զտեսակաւոր կարգս մոզիգանդաց, և զամենայն վայելչաշուք զինուորական զարդս իւրեանց, զի այն վայելուչ հանդիսիւ գնասցուք ի նշանակեալ տեղին, ուր պատրաստեալն էր թափել զլուսակայլակ մեռոնն ի ջուր անդ, ըստ սմին սարասի և մեք ընդ մեզ պատրաստեալ ցզարդ պայծառութեան սրբոյ եկեղեցւոյն մերոյ. և մեր զգեստաւորեալ եպիսկոպոսն զգեստուք, և ի տօնի անդ դտանէին ևս վարդապետք և քահանայք, զնոքումբք ևս շուրջառու արկեալ, սարկաւագացն սաղաւարտապսակք և կղերիկոսք դպիրք աստղագործեալ շապկօք զարդարեալք, յայսպիսի վայելչազարդութիւն և զսուրբ աղաւնաձև անօթն սրբալոյս մեռոնի ունելով ի ձեռս իմ, և վարդապետք ընդ քահանայսն, խաչակիրք շուրջ զինև ընդ տէրունական պատկերակրիցն, և ըստ բաւականին լապտերք ջահաւորեալք, ի ձեռս նորափթիթ պատանեկաց. և այսպիսի և առաւել քան զսոյն հոգեզուարճ հանդիսիւ, ելեալ ի սուրբ եկեղեցւոյն, ընդ մէջ անցեալ գնացաք ընդ մէջ բազմամբոխ պողոտայից. և դասաւորեալ սոլտատացն կէսքն զկնի մեր և կէսքն յառաջոյ, և մեք հոգևորական օրհներգ եղանակաւ ի միջոյ. մարմնաւորական մողեգանդք հնչեցուցանէին զերգս տեսակաւոր նուագարանաց, և աղաւներամ դասք հոգևորականաց, ոչ դադարէին զերգս քաղցրանուագ երաժիշտականս, մինչև հասանիլ մեր յարգունական մեծ շուկայն, ուր տեղի միշտ մեծանուն տօնավաճարացն տաճկաց է. և անդէն կայ առեալ 5 ռոպպէ միջոցաւ և մոզիգանդացն Ռուսաց դամ, քան զդամ հնչեցուցանէին զգործիսն նուագարանաց. և այսպիսի հանդիսադրուատ յամրընթաց քայլա-

փոխութեամբ ժամանեցաք յեզր քաղաքին և Մեշեպաղ անուանեալ հրճուողական դետահոս վայրն։

Եւ ի կատարումն դայս խորհուրդ մկրտութեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, դտանէին անդէն, նախ ի հոդևորականացն դասուց երկու եպիսկոպոսունք, հինգ վարդապետք, ութ քահանայք, չորս սարկաւագունք, 24 կղէրիկոսք։ Իսկ ի մարմնաւորական զինուորեալ դասուցն Ռուսաց կային ի հոգիկան հանդիսի անդ ընդ մեզ խորհրդակատարք. մի հատ քահանայ Ռուսաց. նաև յաստիճանազարդիցն էրիստով զէնարալն, Ճավճավազ զէնարալն[12], Սաբին զէնարալն[13], և այլ բոլբովնիկք, Մովսէս կնէազ Արղութովն[14] և այլ բարձր աղնուական աստիճանաւորք մինչև երկերիւր. և բազմութիւն սօլտատաց դասադաս կարդաւորելոց. էին մինչև 98 հազարք. և այլ ամենայն խարնիճաղանճ բազմութիւնք Հայոցն մերոց քրիստոնէից. ի Դաւրիժու արանց և կանանց բաղումք էին յոյժ յոյժ, որք կային ի տօնի անդ սփիւռ տարածմամբ ի դալարուոջ վայրի նոյն պարտիզին. սոյնպէս և ի տաճկացն ևս կայր բազմութիւնք ի տեսարանի անդ և կային ի սքանչացումն ապ ի բերան և մինչև կատարէաք զխորհուրդ մկրտութեան՝ ահա 24 մեծ թնդանօթք հետզհետէ արձակիւր և կարգք մոզիգանդաց ի մի վայր վայելչապէս հնչէցուցանէին զշեփորայս և զթմբուկս հարկանէին, մինչև զարմանալ ամենեցուն, թե զի՞նչ է նորահրաշ երևեալ մեզ այսօր, և այսպէս ուրախ լինէին ամենայն ազգ քրիստոնէից, ի ձայն ցնծութեան և բարեկենդանութեան օրհնէին, գովէին և փառաւոր առնէին զաստուած և յաւարտ կատարման սուրբ խորհրդոյ այնպիսի հոգևոր և մարմնաւոր հանդիսավեհութեամբ և պատուադիր ուղարկաւորութեամբ ժամանեցուցին զմեզ վերստին ի սուրբ Աստուածածնայ եկեղեցին մեծի և հոյակապ քաղաքին Դաւրիժու։

Յավարտ այսոցիկ ամենայնի որպէս պայմանադրեալ էր մեզ բարձր գերազանց կուսակալ Պասկովիչն, եկն յ8 յունուարի ի Տուզարգանայ ի քաղաքն Դաւրէզ և մեր զկնի երից աւուրց տեսեալ զմեծութիւնն նորին, ընկալաք ի նմանէ զնոր խոստացեալ հրամանագիրս, ի վերայ կողմնական և քաղաքական նաչալնիկացն, որք ի Մարաղայ, յՈրմի, ի Սալմաստ և ի Խոյ ի վերայ Մարաղայու Բաքրանտիեվ զէնարալին[15], Սալմաստու և Որմիեայ Լափթիւ զէնարալին, և քաղաքին Խոյա Նիկոլայ Վասիլևիչ Վիսոցկի պոլկովնիկին[16], որ ինքն դրեաց իւրաքանչիւրոցն այսպէս, թէ սոյն գրաբեր Բարսեղ արքեպիսկոպոսն, և առաջնորդն Թադէոս առաքելոյ վանաց և վիճակացն, յորժամ քարոզէ յերկիրն Սալմաստու, յՈրմիայ և ի Խոյ առ ի չուեցուցանելոյ զժողովուրդս իւր զազգն Հայոց, դուք ևս գտջիք սմա ձեռնտու և սատար, զի ահա ճշմարտիւ յանձնառու եղև առ ի քարոզութեամբ զամենայն զհայազնեայց չուեցուցանել յայնկոյս Երասխայ գետոյն ի վերաբնակեցուցանել զնոսին յերկիր օրհնաբանեալ կայսերական ի Նախիջևան, ի յԵրևան, ի Շարուր, [յ]Ագուլիս և ի Տերելեկեզ և յայլ գաւառս մեծին Ռուսիոյ. մանաւանդ թոյլ տայցէն սոցա իշխանաւորքն Պարսից զնալ յայնկոյս գետոյն անվնաս։

Ի կուսակալ Պասկովիչէն զամենայն ազգային խնդիրս մեր ելս առեալ ի քաղաքէն Դաւրիժու, դիմեցաք նախ ի գաւառն Սալմաստայ. և անդէն սկիզբն արարաք քարոզութեամբ յորդոր լինէլոյ ազգին Հայոց, և ապա դիպեցաւ մեզ Նախավկայի սուրբ վանաց Սարդիս վարդապետ[17], որ և աջակցեալ ընդ մեզ, դտաւ մեզ ձեռնտու յորդորմամբ զժողովուրդս, այսպիսի անձնադիր բարեփոյթ քարոզութեամբ ի միջոցի 8 ամսոց ի քաղաքաց և ի գիւղից գա-

ւառացն Դաւրիժու, Մարաղայու, Խոյա, Սալմաստու, Որմիայ, Սէօքմէնաւայու, Ջալարանայ, Աւաճուղայ և յայլոց նահանգաց, յորս գտանիւր յազգէն մերմէ Հայոց, ի տումար արկանելով մետասան հազար տունս հանաք և չուեցուցաք զնոսին յայսկոյս Երասխ գետոյ, ի միշտ օրհնեցեալ երկիրս ողորմածագոյն կայսերն ամենայն Ռուսաց և յատկական թագաւորի Հայոց մերոց Նիկոլայ Պաւլովիչին։ Եւ արդէն իսկ կան վերաբնակեալք յԵրևան, ի Նախիջևան, յԱդուլիս, ի Շարուր, ի Տերելեկեզ և այլ և այլ քաղաքս և ի գաւառս ըստ հաւանութեան իւրեանց և զերծ յամենայնէ բարբարոսական բռնութեանց դտեալ անլռելի գոհունակութեամբ տեառն աստուծոյ օրհնեալ են, օրհնէին և միշտ ունին օրհնիլ զանգին կեանս ամենաբարեպաշտ կայսերութեան մեծին Ռուսիոյ։

Ի վերջոյ այսոցիկ ամենայնի, Իսրայէլ եպիսկոպոսն Բարդուղիմէայ Առաքելոյ վանաց առաջնորդն, մինչ մեք կամէաք յայնժամ ի Սալմաստու սկիզբն առնել հրաւիրակն քարոզութեան մերոյ յիշեալ եպիսկոպոսին չախորժեալ ընդ այն, կամէր խոչընդոտն լինելով, թիւրել զմիտս Հայոցն մերոց և բազմիցս խրատատու լինէր նոցին, զի մի ախորժեսցին չուել յայնկոյս գետոյն, յօրհնեալ տէրութիւն կայսերական և այսպիսի հակառակութեամբն պատճառ գտաւ և առգելան քանի ինչ մասնաւոր տունք ի չուելոյ և մնացին ընդ բարբարոսական իշխանութեամբ անապատք, որպէս և նա ինքն յիշեալ Իսրայէլ եպիսկոպոսն կամէր ախորժել ծառայել հեթանոսութեանն Պարսից. ընդ ինքեան և զայն յղճալի (խղճալի—Մ. Խ.) տունս Հայոց, մատնեաց ի գերութիւն, որպէս արդ երևի։

Ես նուաստ Բարսեղ եպիսկոպոս զայսոսիկ զամենայն գործսն իմ, բարձր հրամանաւ սրբազան Ներսէս հօրս յաւարտ բերեալ սրբոյն Գրիգորի մեր Լուսաւորչի յօր ելմանն ի Վիրապէն, ես ևս անձամբ անձին ելեալ ի Խոյ քաղաքէն ի վիճակէն սրբազան առաքելոյն իմոյ Թադդէոսի, ահա ես և մանկունք իմ ասելով դիմեալ գնացի յԵրևան ի մայր սուրբ աթոռն մեր Էջմիածին։

Յայս գնալն իմ յաթոռն սուրբ տարայ ընդ իս զամենայն զկայս և զգոյս վանաց իմոց սրբազան առաքելոյն Թադդէոսի, զեկեղեցական զսրբազան անօթս որպէս և իցէ. նաև՝ զամենայն զարտաքսական և զներքսական կայսն։ զգրքեղէնս, զպղինձեղէնս, զհարկաւոր հանդերձեղէնս, ևս և զպաճարեղէնս և զոչխարեղէնս և զայլսն ամենայն, զոյիւ չափ զբովանդակ ինչս վանացն սրբազան առաքելոյն Թադդէոսի հասուցի յաթոռն սուրբ Էջմիածին, և մի առ մի ընդ տումարաւ արկեալ յանձնեցի զամենայն սրբազանադոյն սուրբ վեհապետին Եփրեմայ Առաջնոյ և նորին հոգևորական սրբազան կառավարութեան, սրբազան հարցն, նաև ըստ մասնեայ յամենայն տեսակացն գոյից թողաք ի նոյն սուրբ վանս ըստ կարևորեալ պիտոյիցն։ Բաւ է այսքանս ի ծանօթութիւն։

Մատենադարանի արխիվ, ֆ. Կաթողիկոսական դիվան, ց. 6, թղթ. 55, վավ. 246, 1828։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Ատրպատական աշխարհ—նկատի ունի Հարավային Աղրբեջանը։ 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրից հետո Ատրպատականի հայաբնակ Մակու, Սալմաստ, Խոյ, Ուրմիա, Ղարադաղ և այլ գավառներից, ինչպես նաև Արդաբիլ, Թավրիզ և այլ քաղաքներից մոտ 8250 տուն հայեր գաղթեցին Ռուսաստանին միացած Արևելյան Հայաստան։

2 Իվան Ֆեոդորովիչ Պասկևիչ (1782—1856 թթ.), ռուսական ռազմական գործիչ, գենե-

բալ-ֆելդմարշալ։ Մասնակցել է ռուս-թուրքական (1806—1812 թթ.), հայրենական (1812 թ.) պատերազմներին։ 1827 թ. փոխարինեց Կովկասի կառավարիչ Ա. Պ. Երմոլովին։ Նրա գլխավորած Կովկասյան հատուկ կորպուսը նվաճեց ամբողջ Հարավային Ադրբեջանը։ Թուրքմենչայի բանակցություններում (1828 թ. փետրվարի 8—10) ղեկավարում էր ռուսական պատվիրակությունը։

3 Ստեփանոս եպիսկոպոս Թիֆլիզեցի—Ստեփանոս Ենոքյան եպիսկոպոս։ 1816 թ. Էջմիածնի վարժարանի տեսուչն էր։ 1825 թ. Զմյուռնիայի (Թուրքիա) նվիրակ։ 1827 թ. դեկտեմբերի վերջին մեկնեց Թավրիզ պարսկահայերի դաղթը հորդորելու համար։ 1820 թ. Շիրակի թեմի առաջնորդն էր։ 1830 թ. Էջմիածնի Սինոդի անդամ։

4 Նիկողայոս վարդապետ—1827 թ. եռանդուն գործունեություն ծավալեց Էջմիածնի հիվանդանոցի՝ ռուս վիրավոր ու հիվանդ զինվորներին պարենով ու վառելիքով ապահովելու ուղղությամբ։ 1827 թ. դեկտեմբերի վերջին մեկնում է Ատրպատական՝ տեղի հայերի դաղթը կազմակերպելու համար։ 1831 թ. Նախիջևանի գավառի հայ դաղթականների առաջնորդն էր։ 1834 թ. աշխատում էր Վրաստանի հայոց թեմում։

5 Եղիազար Հովակիմյան Եղիազարյանց—Եղիազար Հովակիմի Լազարյան։ 1812 թ. ծառայության է անցնում կայսեր թիկնապահ գնդում, 1826 թ. ստանում է գնդապետի կոչում։ 1827 թ. ուղարկվում է Կովկաս։ 1827 թ. հոկտեմբերի 19-ին Թավրիզի պարետ և բերդապահ էր։ 1828 թ. փետրվարի 26-ին նշանակվեց պարսկահայերի ներդաղթի կոմիտեի նախագահ։ Մասնակցել է ռուս-թուրքական (1828—1829 թթ.) պատերազմին։

6 Լապան գեներալ—Նիկոլայ Իվանովիչ Լապտև (Լապտին)։ Զինվորական ծառայությունը սկսել է 1797 թ.։ 1816 թ. գնդապետ, 1826 թ.՝ գեներալ-մայոր։ Մասնակցել է ռուս-պարսկական (1826—1828 թթ.) և ռուս-թուրքական (1828—1829 թթ.) պատերազմներին։

7 Բարսեղ եպիսկոպոս—Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ, Մակուի խանության Ավարայր գյուղի մոտ գտնվող ս. Թադեոս առաքյալի վանքի վանահայր, պարսկահայերի դաղթի եռանդուն կազմակերպիչ։ 1810 թ. Էջմիածնի վանքում տեղապահ էր։ Մեծ ճիգ ու ջանք է թափել պարսիկների թաքստոցներից հայ գերիների ազատագրման գործում։ 1828 թ. գրել և կաթողիկոսին է ներկայացրել իր «Պատմութիւն գազէթահանդոյն համառօտակի» և «Գազէթանման լուրք» հաշվետվություն-վավերագրերը։ 1828 թ. օգոստոսին նշանակվել է Նախիջևանի գավառի և Օրդուբադի մարզի հայոց թեմի առաջնորդ։ Նշանակալից դեր է կատարել արևմտահայերի դաղթը (1829 թ.) կազմակերպելու գործում։

8 Տուխարզան—Դեհխարական, Դեհխարդան, գյուղաքաղաք Թավրիզից 45 կմ հարավարևմուտք։ 1827 թ. վերջերին Կովկասյան կորպուսի շտաբ-կայազորը տեղավորված էր այնտեղ։ Թագաժառանգ Աբբաս-Միրզայի խնդրանքով 1827 թ. նոյեմբերի 7-ից մինչև 1828 թ. հունվարի 2-ը Դեհխարականում տեղի են ունեցել (ընդհատումներով) ռուս-պարսկական հաշտության բանակցությունները։

9 Մարդար աղա մահտեսի Եղիազարյան—Մարդար Եղիազարյան, ծնվել է Խոյում։ Ողջունել է ռուսական զորքերի մուտքը Հարավային Ադրբեջան։ Պարսկահայերի դաղթն իրականացնելու համար հանդիպումներ է ունեցել Ե. Լազարյանի և ուրիշների հետ։ 1828 թ. գարնանը Զաքար և Մանուկ եղբայրների հետ հաստատվել է Երևանում։

10 Աբբաս-Միրզա (1789—1833 թթ.)—Ֆաթ-Ալի շահ Ղաջարի երրորդ որդին, թագաժառանգ, Իրանի պետական և ռազմական գործիչ, Ատրպատականի կառավարիչ։ Գլխավորել է Իրանի ներքին և արտաքին քաղաքականությունը՝ ձգտելով ստեղծել կենտրոնացված ուժեղ միապետություն։ Ռուս-պարսկական (1804—1813 թթ., 1826—1828 թթ.) և թուրք-պարսկական (1821—1823 թթ.) պատերազմների ժամանակ պարսկական բանակի գլխավոր հրամանատարն էր։ Թուրքմենչայի բանակցություններում (1828 թ. փետրվարի 8—10) գլխավորում էր Իրանի պատվիրակությունը։

11 Էրիստով Գևորգի Եվսեևիչ, վրաց իշխան, գեներալ-մայոր։ Գ. Ե. Էրիստովը Կովկասի պահեստազորքերի բրիգադի հրամանատարն ու Կախեթի կառավարիչն էր։ Մասնակցել է ռուս-պարսկական (1826—1828 թթ.) պատերազմին և Նախիջևանի (1827 թ. հունիս) գրավմանը։ Նրա զորագունդը 1827 թ. հոկտեմբերի 4-ին դուրս եկավ Նախիջևանից և հոկտեմբերի 13-ին մտավ Թավրիզ։ 1828 թ. սկզբին Ի. Ֆ. Պասկևիչը նրան ազատեց զինվորական ծառայությունից և իշխանի տիտղոսով ուղարկեց Վրաստան։

12 Ճովճավաձե Ալեքսանդր Գարսևանովիչ (1786—1846 թթ.), նշանավոր բանաստեղծ, պետական ու հասարակական գործիչ, գեներալ-լեյտենանտ։ Ծնվել է Պետերբուրգում, զինվորական ծառայությունը սկսել 1804 թ.։ 1817 թ. նրան շնորհվել է գնդապետի կոչում։ Սկզբում

եղել է դրագունյան, ապա Վրաստանի գրենադերական (նռնակավոր, բարձրահասակ զինվորների) գնդի հրամանատար։ Մասնակցել է հայրենական (1812 թ.) պատերազմին։ 1828 թ. նշանակվել է Հայկական մարզի վարչության պետ և Երևանի կայազորի հրամանատար։ Մասնակցել է ռուս-թուրքական (1828—1829 թթ.) պատերազմին։ 1841 թ. շնորհվել է գեներալ-լեյտենանտի կոչում։ Ա. Դ. Ճավճավաձեի տունը ռուս և վրաց գրողների հավաքատեղի էր։

13 Սաքին գեներալ—Դիմիտրի Երոֆեևիչ Օստեն-Սակեն։ Զինվորական ծառայությունը սկսել է 1804 թ., 1816 թ. ստացել է գնդապետի կոչում, իսկ 1824 թ. գեներալ-մայորի։ Մասնակցել է ռուս-պարսկական (1826—1828 թթ.) և ռուս-թուրքական (1828—1829 թթ.) պատերազմներին։

14 Մովսես Արղութով—Մովսես Զաքարի Արղության—Երկայնաբազուկ (1798—1855 թթ.), հայ իշխան, գեներալ-լեյտենանտ։ Զինվորական ծառայությունն սկսել է 1817 թ.։ Մասնակցել է ռուս-պարսկական (1826—1828 թթ.) և ռուս-թուրքական (1828—1829 թթ.) պատերազմներին։ 1828 թ. մայիսից ղեկավարում է պարսկահայերի ներգաղթը։ 1829 թ. մարտից մինչև 1830 թ. մայիսը եղել է Հայկական մարզի վարչության պետի պաշտոնակատար։ 1847 թ. նշանակվել է Դարբանդի զինվորական նահանգապետ, ապա Մերձկասպյան երկրամասի զորքերի հրամանատար։ Հիմնել է Թեմիրխանշուրա (այժմ Բույնակսկ, Դաղստանի ԻՍՍՀ) քաղաքը։

15 Բաքրանտիև գեներալ—Նիկիտա Պետրովիչ Պանկրատև։ Զինվորական ծառայությունն սկսել է 1807 թ.։ 1813 թ. գնդապետ, 1817 թ. գեներալ-մայոր, 1829 թ. գեներալ-լեյտենանտ, 1831 թ. գեներալ-ադյուտանտ։ Մասնակցել է ռուս-պարսկական (1826—1828 թթ.) պատերազմին։ 1830 թ. նշանակվել է Կովկասյան հատուկ կորպուսի շտաբի պետ, իսկ 1831 թ. Կովկասյան բանակի հրամանատար։

16 Նիկոլայ Վասիլևիչ Վիսոցկի—ազնվական, գնդապետ։ Մասնակցել է ռուս-պարսկական (1826—1828 թթ.) պատերազմին։ 1828 թ. Խոյում գտնվող ռուսական գնդի հրամանատարն էր։ Նռանդուն մասնակցություն է ունեցել պարսկահայ գաղթականների քարավանների ստեղծման գործում։ Նրա մարտիկները հայ գաղթականներին ուղեկցել են մինչև Արաքսի ձախ (հարավային) ափը։ Մասնակցել է ռուս-թուրքական (1828—1829 թթ.) պատերազմին։

17 Սարգիս վարդապետ—Մակուի գավառի Դարաշամբ գյուղի ս. Նախավկայի վանքի վարդապետ։ Գործակցել է Բարսեղ եպիսկոպոսին, Ստեփանոս Ենոքյան եպիսկոպոսին, Նիկողայոս վարդապետին և ուրիշների՝ պարսկահայերի գաղթը քարոզելու և քարավանները կազմակերպելու գործում։ 1831 թ. ս. Նախավկայի վանքի առաջնորդն էր։